

# ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

## ՔՐԵԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՏՆՏԵՍԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ (ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ)

### ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Քրեական քաղաքականության ելակետային և հիմնարար դրույթներից մեկը քրեական հարկադրանքի տնտեսումն է, որը գրականության մեջ բնութագրվում է որպես տեսականորեն արդարացված և գործնական նշանակություն ունեցող սկզբունք<sup>1</sup>: Այն վերաբերում է քրեական քաղաքականության ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ոլորտներին:

Խոսելով իրավաստեղծ գործունեության մակարդակում քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքի մասին՝ Ա. Ի. Կորոբեևը գրում է. «Քրեական քաղաքականության իրականացման օրենսդրական փուլում հարկադրանքի տնտեսման սկզբունքը նշանակում է միայն այն արարքները հանցավորների և քրեորեն պատժելիների շարքին դասելը, որոնց դեմ իրականում անհրաժեշտ է պայքարել քրեաիրավական միջոցներով»<sup>2</sup>: Իսկ ըստ Կ. Ֆ. Շերգինայի՝ հանրորեն վտանգավոր արարքներին հակազդելիս քրեական հարկադրանքի մեխանիզմը պետք է կիրառվի բացառապես այն դեպքում, երբ տվյալ արարքները էական սպառնալիք են ներկայացնում պաշտպանվող շահերին<sup>3</sup>: Յու. Ա. Դեմիդովը կարծում է, որ քրեաիրավական պաշտպանության են ենթակա սոցիալական այն արժեքները, որոնք առանց քրեաիրավական ներգործության միջոցների չեն կարող հուսալիորեն պաշտպանված լինել հանրորեն վտանգավոր ոտնձգություններից<sup>4</sup>: Ա. Է. Ժալինսկին գրում է. «Հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության խնդրին անդրադառնալիս անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե արդյոք քրեաիրավական նորմերի կիրառումը հնարավոր չէ փոխարինել իրավունքի այլ ճյուղերի՝ սոցիալական տեսակետից առավել էժան, սակայն բավականին արդյունավետ նորմերով»<sup>5</sup>: Հասարակական հարաբերությունների կարգավորման գործում քրեական օրենսդրության դերը գրականության մեջ ներկայացվում է հետևյալ կերպ. հասարակական միատեսակ հարաբերությունները կարգավորելիս քրեական օրենքին այլ ճյուղային ռեժիմների համեմատությամբ պետք է տրվի երկրոր-

<sup>1</sup> Стѹ Похмелкин В. Новый уголовный кодекс – зеркало российской демократии // Российская юстиция, № 8, 1996, էջ 8:

<sup>2</sup> Коробеев А. И. Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, с. 33.

<sup>3</sup> Стѹ Шергина К. Ф. Смежные составы преступлений и административных правонарушений в действующем уголовном законе // Государство и право. № 11, 2006, էջ 107-108:

<sup>4</sup> Стѹ Демидов Ю. А. Социальная ценность и оценка в уголовном праве. М., 1975, էջ 43:

<sup>5</sup> Жалинский А. Э. Уголовный закон и интересы страны // Обзор материалов научного обсуждения на круглом столе // Государство и право. № 1, 2006, с. 108.

դական դեր<sup>6</sup>:

Ինչ վերաբերում է իրավակիրառ գործունեության ոլորտում քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքին, ապա ընդհանուր գծերով այն ներկայացված է ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 61 հոդվածի 3-րդ մասում. «Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»: Իրավակիրառ գործունեության մակարդակում քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքի իրականացման ձևեր են նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը, պատիժը պայմանականորեն չկիրառելը, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը:

Պարզ է, որ իրավակիրառ գործունեության բնույթն ու բովանդակությունը կախված են իրավաստեղծ գործունեությունից: Չէ՞ որ կոնկրետ ժամանակահատվածում օրենսդրորեն հանցավոր ճանաչված արարքների շրջանակից կախված է հանցագործությունների նախնական ու դատական քննության ընթացքում իրականացվող աշխատանքների ծավալը: Կարելի է ասել, որ քրեականացումն ու ապաքրեականացումը քրեաիրավական քաղաքականության ընթացքում լուծվող գլխավոր, առաջնային հարցեր են, դրանք բնութագրում են քրեաիրավական, իսկ վերջին հաշվով նաև՝ ամբողջ քրեական քաղաքականության ռազմավարական կողմը:

Վերոնշյալի հիման վրա կարելի է ասել, որ քրեականացումն ու ապաքրեականացումը՝ որպես քրեական քաղաքականության իրականացման ձևեր, բնութագրվում են այն առանձնահատկությամբ, որ դրանք նախնական կարգավորման են ենթարկում հանցավորության մակարդակը: Հանցավորության ցուցանիշները (վիճակը, շարժընթացը, գործակիցը), իսկ վերջին հաշվով՝ նաև իրավապահ մարմինների ծանրաբեռնվածությունը կախված են այն հանգամանքից, թե հանրորեն վտանգավոր արարքների ինչպիսի շրջանակ է տվյալ պահին ճանաչված հանցավոր: Սրանից հետևում է, որ քրեականացումն ու ապաքրեականացումը իրականացնում են հանցավորության մակարդակի կարգավորման գործառույթ: Եվ թերևս հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ մասնագիտական գրականության մեջ կարևորվել է պետության պատժողական քաղաքականության գնի որոշման խնդիրը<sup>7</sup>, իսկ որպես քրեականացման ընթացքում հաշվի առնվող գործոններ առանձնացվել են քրեաիրավական նորմի իրացման համար անհրաժեշտ նյութական միջոցների առկայությունը, քրեաիրավական արգելքի տնտեսական և գործնական նպատակահարմարությունը<sup>8</sup>:

Ինչպես տեսնում ենք, ապաքրեականացումը հանդես է գալիս որպես քրեական քաղաքականության օրենսդրական մակարդակում քրեա-

<sup>6</sup> Տե՛ս **Пархоменко С. В.** Деяния, преступность которых исключается в силу социальной полезности и необходимости. СПб., 2004, էջ 147-148:

<sup>7</sup> Տե՛ս **Матусевич Г.** Научный семинар "Уголовная политика Российского государства: состояние, развитие, перспективы" // Уголовное право, № 1, 2004, էջ 137:

<sup>8</sup> Տե՛ս **Кузнецов А. П.** Проблемы криминализации общественно-опасных деяний в налоговой сфере // Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. М., 2005, էջ 300, **Кудрявцев В. Н.** Правовое поведение: норма и патология. М., 1982, էջ 272, **Крылов Г. В.** Проблемы декриминализации деяний в советском уголовном праве. Автореф. канд. дис., М., 1986, էջ 20:

կան հարկադրանքի տնտեսման սկզբունքի իրականացման կարևոր միջոց:

Մասնագիտական գրականության մեջ իրավագիտորեն նշվել է, որ արարքի պատժելիության բուն փաստն արդեն իսկ հիմնավոր փաստարկ է դրա ապաքրեականացման դեմ, այդ պատճառով քրեաիրավական արգելքի վերացումն ավելի ընդլայնված փաստարկուն է պահանջում, քան քրեականացումը<sup>9</sup>:

Սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք այն փաստարկները, որոնցով հիմնավորվում է գործող քրեական օրենսդրությամբ հանցավոր համարվող որոշ արարքների ապաքրեականացման անհրաժեշտությունը:

Այսպես, գտնում ենք, որ անհրաժեշտ է ապաքրեականացնել կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններից մեկի՝ վտանգի մեջ թողնելու այն դրսևորումը, որը նախատեսված է քր. օր.-ի հոդված 128-ի 1-ին մասով: Ապաքրեականացման պահանջումները հիմնավորվում է հետևյալ փաստարկներով: Հոդված 128-ի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում կյանքի համար վտանգավոր դրության մեջ գտնվող անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալու կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելու համար, եթե հանցավորը պարտավոր չի եղել հոգ տանելու տուժողի մասին, և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր դրության մեջ:

Քննարկվող հանցագործությունը օբյեկտիվ կողմից դրսևորվում է անգործությամբ, իսկ, ինչպես գիտենք, անգործության քրեաիրավական բնութագիրն այն է, որ անձը չի կատարում իր վրա դրված պարտականությունը: ՀՀ քր. օր.-ը անգործության սահմանումը չի տալիս, և անհասկանալի է մնում, թե ինչպիսի պարտականության չկատարման մասին է խոսքը՝ զուտ իրավաբանական, թե՞ նաև հասարակական, որը կարող է բխել, ասենք, համակեցության կանոններից: Կարծում ենք, որ դա պետք է վերաբերի միայն իրավաբանական պարտականության չկատարմանը: Այսպես, օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. օր.-ի §13-ը տալիս է անգործության միջոցով հանցագործության կատարման սահմանումը, համաձայն որի՝ նա, ով, անգործություն ցուցաբերելով, չի կանխում քրեական օրենքով նախատեսված հանցակազմին վերաբերող հետևանքը, ենթակա է պատժի միայն այն դեպքում, երբ *իրավաբանորեն* պարտավոր էր կանխել հետևանքը, և եթե անգործությունը համապատասխանում է գործողության միջոցով օրենքով նախատեսված հանցակազմի իրականացմանը: Համանման դրույթ է սահմանված նաև Իսպանիայի քր. օր.-ի հոդված 11-ում՝ հանցագործությունները կամ զանցանքները կատարվում են անգործությամբ, երբ մեղավորի վրա դրված հատուկ *իրավաբանական* պարտականության չկատարումը օրենքով հավասարեցվում է հանցագործություն կատարելուն: Անգործությունը հավասարեցվում է գործողությանը, երբ առկա է գործելու հատուկ պարտականություն, որը բխում է օրենքից կամ պայմանագրից, կամ երբ մեղավորն իր նախորդ գործողությամբ կամ անգործությամբ վտանգի է ենթարկել իրավաբանորեն պաշտպանվող իրավունք:

<sup>9</sup> Տե՛ս Кудрявцев В. Н., Дагель П. С. и др., Основания уголовно-правового запрета (Криминализация и декриминализация). М. 1982, էջ 214:

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ քր. օր.-ի 128 հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում ուղղակիորեն շեշտված է, որ հանցավորը պարտավոր չի եղել հոգ տանելու տուժողի մասին և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր դրության մեջ: Ստացվում է, որ տվյալ դեպքում քրեական պատասխանատվություն է սահմանված ոչ թե իրավաբանական պարտականության, այլ համակեցության կանոններից բխող պարտավորությունը չկատարելու համար: Սակայն սոցիալական վերահսկողության մեխանիզմի բնութագրիչ գծերից մեկն այն է, որ սոցիալական որևէ նորմից բխող պարտավորության չկատարումը պետք է հանգեցնի այդ նորմի բնույթին համապատասխանող արձագանքի, զուտ բարոյական նորմի խախտումը՝ բարոյական ներգործության, իրավական նորմի խախտումը՝ իրավաբանական պատասխանատվության: Կարծում ենք, որ եթե որևէ իրավական ակտով անձի վրա դրված չէ կյանքի համար վտանգավոր դրության մեջ գտնվողին օգնություն ցույց տալու հատուկ իրավաբանական պարտականություն, և այդ անձը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր դրության մեջ, ապա օգնության ցուցաբերումը անձի իրավունքն է, բայց ոչ պարտականությունը՝ իրավաբանական իմաստով: Այլ կերպ ասած՝ զուտ համակեցության կանոններից բխող պարտավորության չկատարումը չպետք է հանգեցնի իրավաբանական, առավել ևս քրեական պատասխանատվության:

Վտանգի մեջ թողնելու քննարկվող տեսակի ապաքրեականացման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև այդ արարքի հանրային վտանգավորության ցածր աստիճանով: Ըստ էության՝ որպես վարքագծի հանրային վտանգավորությունը ձևավորող գործոններ տվյալ դեպքում հանդես են գալիս իրադրությունը և անձի անգործությունը: Քր. օր.-ի 128 հոդվածի 1-ին մասում նկարագրված հանցակազմը ձևական է, և վտանգի մեջ թողնելն ավարտված է համարվում անկախ որևէ հետևանքի վրա հասնելուց:

Առհասարակ, քրեականացման թույլատրելիությունը հիմնավորող կարևոր փաստարկ է քրեաիրավական արգելքի համապատասխանությունը հասարակական գիտակցությանը: Պարզելու համար, թե որքանով է վտանգի մեջ թողնելու տվյալ տեսակի համար սահմանված քրեաիրավական արգելքը համապատասխանում հասարակական կարծիքին, մեր կողմից հարցում անցկացվեց բնակչության շրջանում<sup>10</sup>, որի ընթացքում հարցվողներին ներկայացվեց հետևյալ իրավիճակը՝ «27-ամյա Սուրեն Մինասյանը ժամը 21.45-ին աշխատանքից ոտքով վերադառնում էր տուն: Քաղաքի ամայի հատվածում փողոցն անցնելիս նա փողոցի չլուսավորված մասում՝ մայթի մոտ, նկատեց գետնին ընկած մարդու: Ս. Մինասյանը մի փոքր մոտ գնաց և 5 մետր հեռավորությունից տեսավ, որ գետնին ընկածը մոտ 30 տարեկան կին է: Կնոջ հագուստի վրա և ասֆալտին արյուն նկատելով՝ նա եզրակացրեց, որ կնոջը ավտովթարի են ենթարկել ու դիմել փախուստի: Կնոջ շարժումներից և ծանր շնչառությունից Մինասյանը հասկացավ, որ կինը կենդանի է և անհետաձգելի օգնության կարիք ունի: Սակայն չցանկանալով իր համար ավելորդ գլխացավանքներ առաջացնել՝ Ս. Մինասյանն այդ կնոջը ոչ մի օգնություն չցու-

<sup>10</sup> Հարցումն անցկացվել է 16-60 տարեկան 300 անձանց շրջանում 2009 թվականին:

ցաբերեց և շարունակեց ճանապարհը դեպի տուն: Նրա մոտ բջջային հեռախոս կար, սակայն դարձյալ ավելորդ քաշքշուկների մեջ չընկնելու համար նա շտապօգնություն չգանգահարեց: Գալով տուն՝ նա այդ մասին ոչ ոքի ոչինչ չասաց»: Հարցվողներին առաջարկվեց բնութագրել անձի վարքագիծը՝ նրանց ներկայացնելով հետևյալ տարբերակները՝

ա) նա դատապարտելի ոչինչ չի արել, քանի որ պարտավոր չէր հոգ տանելու անծանոթ կնոջ մասին և ոչ մի մեղք չունի, որ կնոջը վրաերթի են ենթարկել ու փախել,

բ) ճիշտ է, նա անմարդկային կերպով է վարվել, բայց վերջին հաշվով կնոջն օգնել-չօգնելը նրա անձնական գործն է, և չօգնելու համար նրան պետք չէ պատժել, պարզապես մարդկանց մեջ միշտ պետք է մարդասիրություն քարոզել,

գ) նա դատապարտելի վարքագիծ է դրսևորել, քանի որ անկախ ամեն ինչից պարտավոր էր միջոցներ ձեռնարկել մարդկային կյանք փրկելու համար, և պետությունը նրան պետք է պատժի 50.000-100.000 դրամ տուգանքով, որպեսզի իր և ուրիշների համար հետագայում դաս լինի:

«Գ» տարբերակն ընտրեց հարցման ենթարկվածների միայն 28%-ը, իսկ մնացած 72%-ը իրավիճակում նկարագրված վարքագիծը չբնութագրեց որպես իրավաբանորեն դատապարտելի: Ընդ որում, 11%-ը նշեց «ա», իսկ 61%-ը՝ «բ» տարբերակը: Ելնելով հարցման արդյունքներից, կարելի է պնդել, որ որպես սոցիալական վերահսկողության միջոց քրեականացումը տվյալ դեպքում արդյունավետորեն գործել չի կարող, քանի որ պատժի սպառնալիքով անձի մեջ համակեցության կանոն պահպանելու համոզմունք չի ձևավորվի: Խնդիրը պետք է լուծվի դաստիարակչական մեթոդներով, մարդասիրության և գթասրտության գաղափարների քարոզմամբ:

Նշենք, որ, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. օր.-ի § 221-ը, Ռուսաստանի Դաշնության քր. օր.-ի հոդված 125-ը, Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 119-ը քրեական պատասխանատվություն են սահմանում միայն վտանգի մեջ թողնելու այն դեպքերի համար, երբ հանցավորը պարտավոր է եղել տուժողին խնամելու, կամ ինքն է նրան դրել կյանքի համար վտանգավոր դրության մեջ: Կարծում ենք, որ նման մոտեցումն առավել հիմնավորված է: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել քր. օր.-ի 128 հոդվածի 1-ին մասը:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է մասնակիորեն ապաքրեականացնել վաշխառությունը, որն օրենսդիրը դասել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքին: Քր. օր.-ի հոդված 213-ը վաշխառությունը բնորոշում է որպես պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ քաղ. օր.) 879 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բան-

կային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Քր. օր.-ի 213 հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված երկընտրելի գործողություններից առաջինի քրեականացումը քաղ. օր.-ի նշված դրույքի պահպանման քրեաիրավական երաշխիք է, և դրա հիմնավորվածությունը պայմանավորված է քրեականացման համակարգային-իրավական գործառնությամբ: Նույնը չի կարելի ասել վաշխառության մյուս երկընտրելի գործողության՝ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելու քրեականացման մասին: Վաշխառության այդ դրսևորման ապաքրեականացման անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալով: Թեև գործարքը կնքվում է անձի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում, այնուամենայնիվ դա հարկադրական բնույթ չի կրում և նույնիսկ կարող է կատարվել հենց այդ անձի նախաձեռնությամբ: Անձին գործարք կնքելուն հարկադրելը համապատասխան հատկանիշների առկայության դեպքում կարող է որակվել որպես շորթում: Սակայն, եթե գործարքը կնքվում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների (քաղ. օր.-ի հոդված 3, 1-ին մաս) պահպանմամբ, և գործարքի կնքման պահին դրա պայմանների վերաբերյալ անձի համաձայնությունն առկա է, ապա կարծում ենք, որ մյուս կողմի գործողությունները չունեն քրեականացման համար բավարար հանրային վտանգավորություն: Դրանք քաղաքացիաիրավական խախտումներն են, որոնք հանգեցնում են քաղաքացիաիրավական սանկցիաների կիրառման: Այսպես, քաղ. օր.-ի հոդված 313-ի 1-ին մասի համաձայն՝ «...այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր»: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործարքն անվավեր ճանաչելու դեպքում մյուս կողմը տուժողին վերադարձնում է գործարքով իր ամբողջ ստացած գույքը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը հատուցում է դրամով: Դեռ ավելին, իրավավերականգնողական սանկցիայից բացի՝ քաղ. օր.-ի 313 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև տուժանքային բնույթի սանկցիա՝ գործարքով մյուս կողմից տուժողի ստացած գույքը, ինչպես նաև մյուս կողմից նրան հասանելիքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության: Կարծում ենք, որ ստրկացուցիչ գործարքից օգտված կողմի համար վերոնշյալ անբարենպաստ հետևանքների առաջացումը համաչափ է նրա գործողությունների բնույթին, և քրեական հարկադրանքը չարաշահելու անհրաժեշտությունն չկա:

Բացի դրանից՝ վաշխառության տվյալ տեսակի վերաբերյալ քրեական գործերի քննությունը անխուսափելիորեն կապված կլինի որոշ բարդությունների հետ: «Ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններ» արտահայտությունն արժեքավորվող է, և եթե գործի քննությամբ հաստատվի, որ անձն իր կամքով է կնքել գործարքն ու համաձայն է եղել դրա պայմաններին (այդ մասին կարող է վկայել, օրինակ, գործարքի գրավոր ձևի դեպքում նրա ստորագրությունը կամ առավել ևս՝ գործարքի նոտարական վավերացումը), ապա «ծայրահեղ ոչ ձեռնտու պայմանների» առկայության վերաբերյալ ենթադրությունը դառնում է չփարատված կասկած, որը, ըստ

աննեղության կանխավարկածի, պետք է մեկնաբանվի հոգուտ կասկածյալի (մեղադրյալի):

Եվ վերջապես, անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում գործարք կատարելը հասարակության կողմից չի ընկալվում որպես հանցագործություն: Այսպես, մյուս հարցումում ներկայացվեց հետևյալ իրավիճակը. «Մովսես Դավթյանի 8-ամյա երեխան սրտի արատ ուներ, և բժիշկների հավաստմամբ երեխայի կյանքը փրկելու միակ միջոցը վիրահատությունն էր, որն անհրաժեշտ էր կատարել արտասահմանում առնվազն երկշաբաթյա ժամկետում: Վիրահատության համար անհրաժեշտ էր 10 մլն ՀՀ դրամին համարժեք գումար, որը Մ. Դավթյանը չուներ: Մեկ շաբաթվա ընթացքում Դավթյանը ազգականներից, ընկերներից և բարեգործական աղբյուրներից կարողացավ հավաքել ընդամենը 2 մլն դրամ: Վարկ կամ փոխառությամբ դրամ վերցնելու նրա բոլոր փորձերը ձախողվեցին: Դավթյանի ծանոթներից մեկը՝ Տիգրան Վարդանյանը, որին օգնության խնդրանքով դիմել էր Դավթյանը, հայտնեց նրան, որ ինքը երկու սենյականոց բնակարան գնելու մտադրություն ունի, և եթե իրենք պայմանավորվեն գնի շուրջ, Վարդանյանը կգնի Դավթյանի երկսենյականոց բնակարանը: Դավթյանի բնակարանի շուկայական գինը 18 մլն դրամ էր: Նա հայտնեց Վարդանյանին, որ պատրաստ է բնակարանը վաճառել 15 մլն դրամով: Սակայն Վարդանյանը, օգտվելով իրավիճակից, հայտնեց, որ ունի ընդամենը 9 մլն դրամ և այդ գումարից ավելին վճարել չի կարող: Վարդանյանը ավելացրեց նաև, որ առանձնապես չի շտապում, և եթե Դավթյանը չհամաձայնվի, ապա ինքը կշարունակի փնտրել հարմար տարբերակներ: Վիրահատության վերջնաժամկետը մոտենում էր, և Դավթյանին չէր հաջողվում բնակարանը վաճառել առավել բարձր գնով: Հասկանալով, որ Վարդանյանի առաջարկը ընդունելը միակ ելքն է երեխայի կյանքը փրկելու համար, Դավթյանը որոշեց ընդունել այդ առաջարկը: Դավթյանի և Վարդանյանի միջև օրենքով սահմանված կարգով կնքվեց բնակարանի առուվաճառքի պայմանագիրը: Երեխայի վիրահատությունը բարեհաջող անցավ, և Դավթյանի ընտանիքը սկսեց բնակվել վարձով: Սակայն նման պայմաններում Դավթյանի ընտանիքը նյութական դժվարությունների մեջ ընկավ, և նա Վարդանյանից խնդրեց վերանայել պայմանագրի պայմանները, որից Վարդանյանը կտրականապես հրաժարվեց: Ծանոթներից մեկի խորհրդով Դավթյանը դիմեց դատարան»:

Հարցման ենթարկվածների 48,7%-ը ընտրեց հետևյալ տարբերակը՝ «ճիշտ է, Վարդանյանի արարքը բարոյապես դատապարտելի է, սակայն Դավթյանը ոչ մի պահանջ չպետք է ունենա նրա նկատմամբ», իսկ 12%-ը գտավ, որ «Վարդանյանը պարսավելի ոչինչ չի արել, քանի որ Դավթյանն իր կամքով է կնքել գործարքը, դեռ ավելին, որոշակի իմաստով Վարդանյանը օգնել է Դավթյանին»: Հարցվածների միայն 5,7%-ը համաձայն եղավ նշված իրավիճակի բացառապես քաղաքացիաիրավական կարգավորմանը՝ «Վարդանյանը օգտվել է Դավթյանի ծայրահեղ վիճակից, հետևաբար բնակարանը պետք է վերադարձվի Դավթյանին, իսկ 9 մլն դրամը ոչ թե տրվի Վարդանյանին, այլ բռնագանձվի հոգուտ պետության», իսկ 31%-ի կարծիքով՝ «Վարդանյանը օգտվել է Դավթյանի ծայրահեղ վիճակից, հետևաբար բնակարանը պետք է վերադարձվի

Դավթյանին, իսկ 9 մլն դրամը՝ Վարդանյանին»։ Հարցվողներին ներկայացվեց նաև տվյալ իրավիճակի գործող օրենսդրական կարգավորումը (քաղաքացիաիրավական և քրեական համատեղ պատասխանատվության կիրառումը) արտացոլող տարբերակը. «Վարդանյանը օգտվել է Դավթյանի ծայրահեղ վիճակից, հետևաբար բնակարանը պետք է վերադարձվի Դավթյանին, իսկ 9 մլն դրամը ոչ թե տրվի Վարդանյանին, այլ բռնագանձվի հոգուտ պետության, և, բացի այդ, Վարդանյանը պետք է պետությանը վճարի տուգանք՝ 300.000-500.000 դրամի չափով»։ Այս տարբերակը ընտրեց հարցվածների ընդամենը 2,6%-ը։ Հարցման արդյունքները նույնպես հիմնավորում են այն, որ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում գործարք կատարելը չպետք է հանցագործություն համարվի։

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք քր. օր.-ի 213 հոդվածի 1-ին մասից հանել «ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է նյուս կողմը» բառերը։

Գտնում ենք, որ անհրաժեշտ է ապաքրեականացնել նաև խուլիգանության հասարակ տեսակը և այն նախատեսել որպես վարչական իրավախախտում, այսինքն՝ վերադառնալ քր. օր.-ի հոդված 258-ի այն խմբագրությանը, որն առկա էր նախքան 16. 12. 2005 թ. փոփոխությունը։ Մինչև նշված փոփոխությունը այսպես կոչված «մանր խուլիգանությունը» համարվում էր վարչական իրավախախտում, իսկ քրեորեն պատժելի էր համարվում հասարակական կարգի այնպիսի կոպիտ խախտումը և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը, որը զուգորդվում էր անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով։

Բավականին ուշագրավ է այն միակ հիմնավորումը, որը որպես մանր խուլիգանությունը քրեականացնելու փաստարկ բերվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 16. 12. 2005 թ. օրենքների նախագծերին կից օրենսդրին ներկայացված տեղեկանք-հիմնավորման մեջ։ Դրանում նշված է, որ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է այդ օրենսդրական ակտերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16 հոդվածի դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ՝ դրանց անմիջական գործողությամբ։ Ըստ տեղեկանքի՝ «...Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածը չի նախատեսում դրույթ, որով հնարավոր է անձին ազատությունից զրկել զանցանք կատարելու համար։ Այսինքն՝ վարչական կալանքը որպես վարչական տույժի միջոց կիրառելը հակասահմանադրական է»։ Ներկայացված հիմնավորման նախապատմությունը կապված է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) 2002 թ. սեպտեմբերի թիվ 1304 բանաձևի 9-րդ կետի հետ, որում նշված է. «Վեհաժողովը այնուհետև կոչ է անում, առանց ձգձգման, վերանայել Վարչական օրենսգիրքը։ Նա իշխանություններին կոչ է անում վե-



րացնել վարչական կալանքի վերաբերյալ դրույթները և մինչ վերացնելը զերծ մնալ դրանք կիրառելուց: Նա իշխանություններին զգուշացնում է դրանց կիրառման արդյունքում առաջացող չարաշահումների մասին, որոնք լրջորեն հակասում են Կազմակերպության սկզբունքներին»: Ասենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2007-2009 թթ. իր մի շարք վճիռներով անօրինական է համարել Հայաստանի Հանրապետությունում վարչական կալանքի կիրառումը և Հայաստանի Հանրապետությանը պարտավորեցրել է դրամական կարգով փոխհատուցել դիմումատուների կրած ոչ նյութական վնասները<sup>11</sup>:

Իհարկե, 16.12.2005 թ. վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ վիժօ) փոփոխությամբ վարչական կալանքը որպես վարչական տույժ վերացնելը ճիշտ էր, քանի որ դա պայմանավորված էր մեր օրենսդրությունը երկրի հիմնական օրենքին և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Սակայն արդյո՞ք դա վարչական իրավախախտումը մեխանիկորեն քրեականացնելու հիմք էր: Այն հանգամանքը, որ վարչական իրավախախտման համար անձին ազատությունից զրկելը հակասահմանադրական է, նշանակում է, որ վարչական իրավախախտման համար սահմանված վարչական կալանքը պետք է վերացվի, այլ ոչ թե այն, որ վարչական իրավախախտումը պետք է վերածվի հանցագործության, և կալանքը, վարչական տույժից վերածելով պատժի, «հարմարեցվի» երկրի հիմնական օրենքին: Մեր համոզմամբ՝ վարչական կալանքի վերացումն ինքնին չի կարող հանդես գալ որպես մանր խուլիգանությունը քրեականացնելու բացարձակ փաստարկ: Վարչական իրավախախտումը քրեականացնելու անհրաժեշտությունը առաջին հերթին պետք է պայմանավորված լինի դրա հանրային վտանգավորության վերագնահատմամբ, իսկ նշված տեղեկանք-հիմնավորման մեջ այդ արարքի հանրային վտանգավորության փոփոխության վերաբերյալ ոչ մի նշում չկա:

Մանր խուլիգանության քրեականացումը վարչական կալանքի վերացմամբ առաջացած խնդրի լուծման միակ հնարավոր միջոցը չէր: Վիժօ-ի հոդված 172-ում մանր խուլիգանության համար բացի վարչական կալանքից նախատեսված էր նաև տուգանք: Այդպիսի երկընտրելի վարչական տույժեր էին նախատեսված նաև վիժօ-ի այլ հոդվածներում (օրինակ՝ 97.2, 97.3, 175, 182, 206.5): Ուշագրավ է, որ վարչական կալանքի վերացումից հետո նշված հոդվածների սանկցիաներում վարչական կալանքը պարզապես հանվեց, և թողնվեց միայն տուգանքը: Ի դեպ, հոդվածներ 175-ում («Հասարակական վայրերում ոգելից խմիչքներ օգտագործելը կամ հասարակական վայրերում հարբած վիճակում երևալը») և 182-ում («Ոստիկանության ծառայողի կամ զինծառայողի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը») վարչական կալանքի վերացումը «փոխհատուցվեց» սահմանված տուգանքի

---

<sup>11</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները՝ «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» (15. 11. 2007 թ.), «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» (02. 12. 2008 թ.), «Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» (02. 12. 2008 թ.), «Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի» (02. 12. 2008 թ.), «Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 1)» (13. 01. 2009 թ.), «Սափեյանն ընդդեմ Հայաստանի» (13. 01. 2009 թ.) գործերով:

չափերի մեծացմամբ: Այս առումով մանր խուլիզանության զանցակազմի վերաբերյալ օրենսդրի տարբերակված մոտեցումը պարզապես անհասկանալի է:

Մեր կարծիքով, մանր խուլիզանության քրեականացումը չի համապատասխանում պետության քրեական քաղաքականության՝ քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքին: Շեղվող վարքագծի համար քրեական պատասխանատվության սահմանումը պետք է լինի խնդրի լուծման ծայրահեղ միջոց, երբ ներգործության այլ ձևերի կիրառումը չի կարող ապահովել ցանկալի արդյունք, և այդ վարքագծի հանրային վտանգավորությունն իսկապես հանգեցնում է քրեական հարկադրանքի կիրառման անհրաժեշտության: Ըստ էության, հասարակ խուլիզանության հանրային վտանգավորությունը ձևավորող գործոններ են հասարակական կարգի կոպիտ խախտումը և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը: Այդպիսի վարքագիծը, իհարկե, բնութագրվում է վտանգավորության որոշակի աստիճանով և պետք է հանգեցնի պետական հարկադրանքի կիրառման: Սակայն, կարծում ենք, որ եթե նշված գործողությունները չեն զուգորդվում անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, ապա այդ գործողությունների վտանգավորությանը համաչափ է վարչական պատասխանատվության կիրառումը:

Կարծում ենք, որ ելնելով քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքից՝ մանր խուլիզանությունը պետք է նախատեսել որպես վարչական իրավախախտում, իսկ քրեաիրավական ներգործության մեխանիզմը պետք է գործադրվի այն ժամանակ, երբ խուլիզանությունը բնութագրվում է հանրային վտանգավորության աստիճանը բարձրացնող հատկանիշներով: Այսպես, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. օր.-ի 7-րդ բաժնի («Հասարակական կարգի դեմ ուղղված պատժելի արարքներ») §125-ը քրեական պատասխանատվություն է սահմանում միայն հասարակական անդորրը խախտող խմբակային բռնի գործողությունների համար: Ռուսաստանի Դաշնության քր. օր.-ի 213 հոդվածը որպես խուլիզանության հիմնական հանցակազմի երկընտրելի հատկանիշներ նախատեսում է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրումը, քաղաքական, գաղափարական, ռասայական, ազգային կամ կրոնական ատելության կամ թշնամանքի, որևէ սոցիալական խմբի նկատմամբ ատելության կամ թշնամանքի շարժառիթները: Բելառուսի Հանրապետության քր. օր.-ի 339 հոդվածում և Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի 257 հոդվածում որպես հասարակ խուլիզանության հատկանիշներ նախատեսված են քաղաքացիների նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ բացառիկ ցինիզմով աչքի ընկնող գործողությունները: Հասարակ խուլիզանությունն ապաքրեականացնելու և այն վարչական իրավախախտումների շարքին դասելու նպատակահարմարությունը հիմնավորվում է նաև այն փաստարկով, որ գործնական տեսակետից մեծ արարքներին արձագանքելու վարչաիրավական մեխանիզմն ավելի արդյունավետ է, քան քրեաիրավականը: Այսպես, վարչական իրավախախտման վերաբերյալ գործով

վարույթն իր ընթացակարգով համեմատաբար ավելի պարզ է, քան քրեական գործով վարույթը. վիժօ-ի 277 հոդվածի համաձայն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում»: Մանր խուլիգանության վերաբերյալ գործերով վիժօ-ն սահմանում էր գործի քննության մեկօրյա ժամկետ: Վարչական վարույթի պարզեցված ընթացակարգը, իհարկե, ոչ մի դեպքում չպետք է իրավակիրառողի կամայականության տեղիք տա: Եվ պետք է նշել, որ վիժօ-ն սահմանել է այդ կամայականությունը բացառող այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի դռնբաց քննությունը (հոդված 249), վարչական իրավախախտումների գործերի վարույթի ժամանակ դատախազական հսկողությունը օրենքների կատարման նկատմամբ (հոդված 250), վարչական պատասխանատվության ենթարկվող անձի՝ գործի նյութերին ծանոթանալու, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում փաստաբանի իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքները (հոդված 267), վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը գանգատարկելու իրավունքը (286): Ինչպես տեսնում ենք, մանր խուլիգանության ապաքրեականացումը և այն որպես վարչական իրավախախտում նախատեսելը մի կողմից թույլ կտա անձի իրավունքներն ու օրինական շահերն առանց վտանգի ենթարկելու պարզեցնել տվյալ գործերով վարույթի կարգը, իսկ մյուս կողմից կնվազեցնի նախնական քննության մարմինների ծանրաբեռնվածությունը:

Հիմնվելով վերոնշյալ փաստարկների վրա՝ առաջարկում ենք քր. օր.-ի 258 հոդվածի 1-ից 4-րդ մասերի դիսպոզիցիաները շարադրել մինչև 16.12.2005 թ. եղած խմբագրությամբ: Իսկ քրեորեն պատժելի խուլիգանության և վարչական իրավախախտում հանդիսացող մանր խուլիգանության սահմանազատման դժվարություններից խուսափելու համար առաջարկում ենք մանր խուլիգանությունը վիժօ-ում նախատեսել ոչ թե 172 հոդվածի նախկին անորոշ խմբագրությամբ (հասարակական վայրերում անձին հասցված անցենզուր հայհոյանքը, քաղաքացիներին վիրավորական ձևով հետամտելը և նմանօրինակ այլ գործողություններ, որոնք խանգարում են հասարակական կարգն ու քաղաքացիների հանգիստը), այլ այնպես, ինչպես դա արված է քր. օր.-ի ներկայիս խմբագրությամբ 258 հոդվածի 1-ին մասում: Տվյալ դեպքում որպես հանցանքի և զանցանքի սահմանազատման չափանիշներ հանդես կգան բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը: Ըստ այդմ՝ առաջարկում ենք վիժօ-ն լրացնել 172.2 հոդվածով («Մանր խուլիգանություն») և դրա դիսպոզիցիան շարադրել հետևյալ կերպ. «Դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով»:

Կարծում ենք, որ անհիմն պետք է համարել քր. օր.-ում 04.10.2005 թ. կատարված այն լրացումը, որով քրեականացվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնական

զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնական շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը (հոդված 315.1): Հոդվածի դիսպոզիցիան քրեականացված արարքը բնորոշում է հետևյալ կերպ. «Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնական զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը և (կամ) անօրինական կառույցները չքանդելը, որոնք կատարվել են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

Նշված արարքի ապաքրեականացման անհրաժեշտության փաստարկումը հանգում է հետևյալին: Հոդված 315.1-ի ձևակերպումից դժվար չէ նկատել, որ օրենսդիրը կառուցել է վարչական պրեյուդիցիայով քրեաիրավական նորմ, ինչը բնորոշ էր խորհրդային քրեական օրենսդրությանը: Որոշ հեղինակներ, հենվելով քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքի վրա, անհրաժեշտ են համարում վերադառնալ քրեական օրենսգրքում վարչական պրեյուդիցիայի նախատեսմանը<sup>12</sup>: Այսպես, Ս. Ֆ. Միլոկովը կարծում է, որ վարչական պրեյուդիցիան մի կողմից թույլ կտա բավականին վաղ փուլում կանխել իրավախախտի հանրորեն վտանգավոր կարիերայի զարգացումը, իսկ մյուս կողմից առանց օրինապահ բնակչության շահերին վնասելու հնարավորություն կտա տնտեսելու քրեական հարկադրանքը<sup>13</sup>: Գ. Վ. Կրիլովը, հիմնավորելով վարչական պրեյուդիցիայի նախատեսումը, գրում է, որ վարչական պրեյուդիցիայով հանցագործությունների դեպքում նախկինում կատարված իրավախախտումները հանցագործության օբյեկտիվ կողմի մեջ չեն մտնում: Հանցագործություն է միայն վերջին արարքը: Դրա ընդգծված հանրային վտանգավորությունը որոշվում է անձի մեջ կայուն հակահասարակական դիրքորոշման առկայությամբ, որն արտահայտվում է համասեռ իրավախախտումների բազմակի կատարմամբ՝ չնայած վարչական տույժի կիրառմանը: Հանցագործության սուբյեկտի հենց այս հատկանիշն է էապես բարձրացնում իր կատարած արարքի հանրային վտանգավորությունը<sup>14</sup>:

Համաձայն չլինելով նշված մոտեցմանը՝ կարծում ենք, որ 2003 թ. նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ վարչական պրեյուդիցիայից հրա-

<sup>12</sup> Стѣ Грищук В. К. Некоторые вопросы разграничения преступлений и административных проступков // Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. Материалы IV Международной научно-практической конференции, МГУ им. М. В. Ломоносова. М., 2005, т. 2, с. 149:

<sup>13</sup> Стѣ Милоков С. Ф. Административное и уголовное законодательство: рядом или вместе // Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. Материалы IV Международной научно-практической конференции, МГУ им. М. В. Ломоносова. М., 2005, т. 2, с. 379:

<sup>14</sup> Стѣ Крылов Г. В. նշվ. աշխ., էջ 19-20:

Ժարվելը լիովին արդարացված էր: Ճիշտ չէ այն պնդումը, թե առաջին իրավախախտման համար վարչական տույժի կիրառումից հետո տվյալ վարչական իրավախախտման կրկին կատարումը, լինելով անձը բնութագրող հատկանիշ, բարձրացնում է երկրորդ իրավախախտման հանրային վտանգավորությունը: Անձը բնութագրող հատկանիշները չեն կարող հանդես գալ որպես արարքի հանրային վտանգավորությունը ձևավորող ինքնուրույն գործոններ: Ինչպես իրավագիտերեն նշում է Յու. Ի. Լյապունովը՝ անձի վտանգավորությունը կարող է արտահայտվել միայն նրա արարքում<sup>15</sup>: Այն, որ անձը բնութագրող հատկանիշները չեն արտահայտում արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, հիմնավորվում է քր. օր.-ի 61 հոդվածի 2-րդ մասի ձևակերպմամբ, որում որպես պատժի տեսակը և չափը որոշելիս հաշվի առնվող առանձին հանգամանքներ նշված են մի կողմից հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, իսկ մյուս կողմից՝ հանցավորի անձը բնութագրող տվյալները: Չետևաբար անձի՝ վարչական տույժի ենթարկված լինելու հանգամանքը նրա կողմից կրկին կատարվող վարչական իրավախախտմանը նոր որակ (լրացուցիչ վտանգավորություն) չի հաղորդում: Այլ խոսքով՝ վարչական իրավախախտման հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը դրա կրկնակի կատարումից չեն փոխվում. դրանք շարունակում են մնալ նույն վարչական իրավախախտումը: Կատարված առանձին իրավախախտումներից յուրաքանչյուրը չունի հանցագործությանը բնորոշ հանրային վտանգավորության աստիճան, վերջինս չի ձևավորվում նաև նշված իրավախախտումների մեխանիկական գումարի արդյունքում: Վարչական պրեյուդիցիայի նախատեսումը չի բխում քրեական պատասխանատվության հիմքն ամրագրող՝ քր. օր.-ի 3 հոդվածի իմաստից, քանի որ վարչական պրեյուդիցիայի դեպքում քրեական պատասխանատվության հիմք է դառնում ոչ թե քր. օր.-ով ի սկզբանե հանցավոր ճանաչված արարքի կատարումը, այլ վարչական իրավախախտում կատարած և վարչական տույժի ենթարկված անձի կողմից նոր վարչական իրավախախտում կատարելը: Ելնելով վերոնշյալից՝ կարծում ենք, որ վարչական պրեյուդիցիայի վերականգնումը և քր. օր.-ի 315.1 հոդվածով կատարված քրեականացումը ճիշտ չեն:

Բացի այդ՝ 315.1 հոդվածում վարչական պրեյուդիցիայի նախատեսումը չի տեղավորվում պետության պատժողական քաղաքականության տրամաբանության մեջ: Եթե վարչական պրեյուդիցիայի նախատեսումը քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքի իրականացման միջոց է, ապա ենթադրվում է, որ վարչական պրեյուդիցիայի միջոցով նախատեսված հանցագործության համար սահմանված պատիժը պետք է ավելի խիստ լինի, քան համապատասխան վարչական իրավախախտման համար սահմանված վարչական տույժը: Սակայն քննարկվող արարքի համար քր. օր.-ով նախատեսված պատիժն ավելի մեղմ է, քան նախորդ իրավախախտման համար սահմանված վարչական տույժը: Այսպես, վիժ-ի 48 հոդվածով պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն առաջին անգամ ինքնական զավթելու և դրա

<sup>15</sup> Стен Ляпунов Ю. И. Общественная опасность деяния как универсальная категория советского уголовного права. М., 1989, т. 2 101:

հետևանքները չվերացնելու համար սահմանված է տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով (գյուղական համայնքներում կատարելու դեպքում՝ հարյուրապատիկի չափով), տվյալ արարքը տուգանք նշանակելուց հետո շարունակելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ դրանից հետո մեկ տարվա ընթացքում տվյալ արարքի կատարումն արդեն հանցագործություն է, որը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով<sup>16</sup>: Վարչական տույժի և քր. օր.-ով նախատեսված պատժի նման անհամաչափությունը անհիմաստ է դարձնում քր. օր.-ի 315.1 հոդվածով վարչական պրեյդիկտից հայի նախատեսումը: Ուստի, ելնելով ներկայացված փաստարկներից, առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել քր. օր.-ի 315.1 հոդվածը:

Ներկայացնենք նաև արդարադատության դեմ ուղղված որոշ հանցագործությունների ապաքրեականացմանը վերաբերող մասնավոր հարցեր: Կարծում ենք, որ անհրաժեշտ է մասնակիորեն ապաքրեականացնել քր. օր.-ի 334.1 հոդվածով նախատեսված հանցագործությունը՝ քրեակատարողական հիմնարկից կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստ կատարած անձին աջակցելը: Ի տարբերություն 334 («Հանցագործությունը պարտակելը») և 335 («Հանցագործության մասին չհայտնելը») հոդվածների՝ 334.1 հոդվածը հանցագործության սուբյեկտների շրջանակի հարցում որևէ բացառություն չի սահմանում փախուստ կատարած անձի ամուսնու և մերձավոր ազգականների համար: Կարծում ենք, որ ուղղիչ հիմնարկից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից փախուստ կատարած անձի ամուսինը և մերձավոր ազգականները նրան քննությունից կամ դատից կամ պատժի հետագա կրումից խուսափելուն նախապես չխոստացված աջակցելու համար քրեական պատասխանատվության չպետք է ենթարկվեն: Կարծում ենք, որ քր. օր.-ում այս հարցի ներկայիս կարգավորումը հակասում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին, որովհետև քր. օր.-ի 355 հոդվածով նախատեսված հանցանքը («Փախուստն ազատագրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից») կատարած անձի ամուսինը և մերձավոր ազգականները նրա՝ նախապես չխոստացված պարտակման համար պատասխանատվության են ենթարկվում քր. օր.-ի 334.1 հոդվածով, իսկ մնացած բոլոր հանցագործությունների՝ նախապես չխոստացված պարտակման դեպքում ենթակա չեն քրեական պատասխանատվության 334 հոդվածի 2-րդ մասի ուժով: Օրինակ, Իսպանիայի քրեական օրենսգրքի 451 հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանված այն անձի համար, որը, իմանալով հանցագործության մասին և չմասնակցելով դրան որպես կատարող կամ հանցակից, այդ հանցագործության համար ենթադրաբար պատասխանատու անձանց հանցանքի կատարումից հետո կօժանդակի թաքնվելու քննությունից, հետախուզումից կամ արգելանքից: Սակայն 454 հոդվածը բացառություն է սահմանում հանցագործու-

<sup>16</sup> Նախքան 01. 06. 2006 թ. քր. օր.-ի 315.1 հոդվածում փոփոխություն կատարելը տվյալ հանցագործությունը պատժվում էր ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

թյան համար ենթադրաբար պատասխանատու անձի անուսնու, այդ անձի հետ անուսնական հարաբերություններին համանման կայուն կապի մեջ գտնվող անձանց, վայրընթաց կամ վերընթաց գծով ազգականի, հարազատ կամ ոչ հարազատ եղբոր կամ արյունակցական նման աստիճանի ազգականի համար: Քննարկվող արարքի հասարակական գնահատականը պարզելու նպատակով անցկացված հարցման ժամանակ հարցվողներին ներկայացվեց հետևյալ իրավիճակը. «Յոթ տարվա ազատազրկման դատապարտված Բաբկեն Նազարյանը պատժի մեկ տարին կրելուց հետո փախուստ կատարեց քրեակատարողական հիմնարկից և պատահական մեքենայով ուղևորվեց Երևան, որտեղ միայնակ բնակվում էր իր եղբայրը՝ Գևորգ Նազարյանը: Գիշերը ժամը 03.20-ին նա հասավ եղբոր բնակարան և տվեց դռան զանգը: Գ. Նազարյանը, որը ոչինչ չգիտեր կատարված փախուստի մասին, բացելով դուռն ու տեսնելով եղբորը, շատ զարմացավ ու ներս թողեց նրան: Բ. Նազարյանը պատմեց փախուստի մանրամասներն ու խնդրեց եղբորը, որ նա օգնի իրեն մի որոշ ժամանակ թաքնվելու իրավապահ մարմիններից, մինչև որ ինքը հանրապետությունից փախչելու ելք կգտնի: Հայտնվելով նման իրավիճակում՝ Գ. Նազարյանը որոշեց օգնել եղբորը: Գ. Նազարյանի ընկերներից մեկը նրան էր տվել Վանաձոր քաղաքում գտնվող իր բնակարանի բանալիները՝ խնդրելով ժամանակ առ ժամանակ հետևել բնակարանին, մինչև որ ինքը կվերադառնա արտասահմանից: Նույն գիշերը Գ. Նազարյանն իր մեքենայով եղբորը տարավ նշված բնակարան, որոշ գումար տվեց նրան և լուսադեմին վերադարձավ Երևան»: Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվածների գերակշիռ մասը համաձայն չէ սահմանված քրեաիրավական արգելքին: Այսպես, հարցվածների 77%-ը նկարագրված արարքը քրեորեն պատժելի չհամարեց. նրանցից 52,7%-ը ընտրեց հետևյալ տարբերակը. «Ճիշտ է, հանցագործին աջակցելը հակաօրինական արարք է, և պետք է դատապարտվի, բայց այս դեպքում, հաշվի առնելով եղբայր լինելու հանգամանքը, Գ. Նազարյանը չպետք է պատժվի», իսկ 24,3%-ի կարծիքով՝ «նա իսկական եղբոր նման է վարվել, և պետք չէ ոչնչուն նրան մեղադրել, քանի որ բոլորն էլ այդպես կվարվեին»: Հարցվածների միայն 23%-ը նշեց, որ «անկախ ամեն ինչից հանցագործին աջակցելը հակաօրինական արարք է, և Գ. Նազարյանը պետք է դատապարտվի ազատազրկման մինչև երեք տարի ժամկետով»: Ինչպես տեսնում ենք, փախուստ կատարած անձի անուսնու և մերձավոր ազգականների մասով քր. օր.-ի 334.1 հոդվածով նախատեսված արարքի քրեականացումը հիմնականում չի համապատասխանում հասարակական կարծիքին, և այդ մասով տվյալ քրեաիրավական արգելքը գործող չի լինի, քանի որ օրենքի հասցեատերերը չեն կատարի օրենքի պահանջները: Բացի այդ՝ անհասկանալի է, թե ինչպես պետք է ապացուցվեն գործի հանգամանքերը, եթե փախուստ կատարած անձի և նրան պարտակողի ընտանիքի անդամները օգտվեն իրենց անուսնու և մերձավոր ազգականի դեմ չվկայելու սահմանադրական իրավունքից: Ուստի, ելնելով բարոյականության նորմերից, մարդու արժանապատվությունը հարգելու պետության սահմանադրական պարտականությունից, առաջարկում ենք քր. օր.-ի 334.1 հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 մասով. «Փախուստ կատարած անձի անուսինը և մերձավոր

ազգականները սույն հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվության ենթակա չեն»:

ՀՀ քր. օր.-ի 339 հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելու համար: Հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Կարծում ենք, որ 339 հոդվածի 2-րդ մասի խմբագրման միջոցով անհրաժեշտ է ընդլայնել ցուցմունք տալուց հրաժարվելու ապաքրեականացման ծավալը: Ներկայացնենք ապաքրեականացման անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկը: Քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ քր. դատ. օր.) 20 հոդվածում ամրագրված՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքից: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ»: Սակայն քր. դատ. օր.-ում ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքն ընդգրկում է ավելի լայն ոլորտ, քան անձի կողմից իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելն է: Քր. դատ. օր.-ի 20 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքով կարող են նախատեսվել վկայություններ տալու և տեղեկություններ հայտնելու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»: Այսպես, օրինակ, համաձայն քր. դատ. օր.-ի 448 հոդվածի 1-ին մասի՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք կարող են ցուցմունքներ չտալ որպես վկա կամ տուժող: Նույն հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից բխում է, որ հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք կարող են հրաժարվել իրենց ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված հարցերի վերաբերյալ ցուցմունքներ տալուց: Ստացվում է, որ քր. դատ. օր.-ի համաձայն՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք պարտավոր չեն ցուցմունք տալ, իսկ քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասում այդ անձանց վերաբերյալ որևէ վերապահում արված չէ: Նշանակում է՝ այդ անձանց կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության քր. օր.-ի 339 հոդվածով, քանի որ, ըստ օրինականության սկզբունքի, արարքի հանցավոր լինելը կամ չլինելը կարող է որոշվել միայն քրեական օրենքով: Ուստի կարծում ենք, որ քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասով պետք է ապաքրեականացվի ոչ միայն անձի կողմից իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելը, այլև քր. դատ. օր.-ով սահմանված՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու բոլոր դեպքերում ցուցմունք տալուց հրաժարվելը:

Ներկայացնենք քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթին վերաբերող ևս մեկ դիտարկում: Այդ մասը սահմանում է. «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»: Քրեական պատասխանատվությունից ազատելը նշանակում է, որ անձը կատարել է հանցագործություն, սակայն պետությունը որոշակի հիմքերի



առկայության դեպքում (գործուն զղջալը, իրադրության փոփոխությունը, վաղեմության ժամկետներն անցնելը) նրան չի ենթարկում պատասխանատվության: Քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասում օգտագործված «ազատվում է քրեական պատասխանատվությունից» արտահայտությունը կարող է սխալ տպավորություն ստեղծել այն մասին, որ եթե վկան կամ տուժողը հրաժարվում է իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց, ապա նրա արարքը պարունակում է ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմ. պարզապես, բարոյականության նորմերից ելնելով, պետությունը նրան ազատում է կատարած հանցանքի համար քրեական պատասխանատվությունից: Ցուցմունք տալուց հրաժարվելը անգործությամբ դրսևորվող հանցագործությունն է, իսկ անգործության քրեաիրավական էությունն այն է, որ անձը չի կատարում իր վրա դրված պարտականությունը: Վկան և տուժողը իր, ամուսնու և մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալու պարտականություն չունեն, նմանապես՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձը չի կրում ցուցմունք տալու պարտականություն: Հետևաբար, նշված անձանց կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը չի կարող քրեաիրավական իմաստով անգործություն համարվել: Ուստի քր. օր.-ի 339 հոդվածի երկրորդ մասում պետք է սահմանել ոչ թե քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, այլ ապաքրեականացում իրականացնող դրույթ: Կարծում ենք, որ քր. օր.-ի 339 հոդվածի երկրորդ մասում օգտագործված «ազատվում է քրեական պատասխանատվությունից» արտահայտությունը անհրաժեշտ է փոխարինել «ենթակա չէ քրեական պատասխանատվության» արտահայտությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քր. օր.-ի 339 հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքով նախատեսված դեպքերում ցուցմունք տալու պարտականությունից ազատված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության ցուցմունք տալուց հրաժարվելու համար»:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է ապաքրեականացնել քր. օր.-ի 346 հոդվածով նախատեսված հանցագործությունը՝ անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չարամտորեն չկատարելը: Հոդվածի դիսպոզիցիան հետևյալն է. «Անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չարամտորեն չկատարելը, որի հետևանքով կասկածյալը կամ մեղադրյալը խուսափել է քննությունից կամ դատից»: Քր. դատ. օր.-ի 145 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձնական երաշխավորությունը վստահություն վայելող անձանց գրավոր պարտավորությունն է այն մասին, որ նրանք իրենց խոսքով և մուծվող դրամական գումարով երաշխավորում են կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը»: Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երաշխավորող կարող է լինել չափափաս ֆիզիկական անձը: Ընդ որում, անձը պետք է մուծի դրամական գումար՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով: Երաշխավորողի կողմից մուծված դրամական գումարը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ վերածվում է պետության եկամուտի, եթե երաշխավորողը չի կատարել կասկածյալի

կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծ ապահովելու իր պարտավորությունը կամ ինքնակամ հրաժարվել է երաշխավորությունից (քր. դատ. օր.-ի 147 հոդվածի 3-րդ մաս): Կարծում ենք, որ անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չկատարելը չունի հանրային վտանգավորության այն աստիճանը, որն անհրաժեշտ է արարքը հանցագործություն ճանաչելու համար: Ստացվում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի կողմից քննությունից կամ դատից խուսափելն ընդամենը դատավարական իրավախախտում է, որը կարող է հանգեցնել դատավարական սանկցիայի (ավելի խիստ խափանման միջոցի կիրառման), իսկ անձնական երաշխավորողն այդ դատավարական իրավախախտումը չկանխելու համար ենթարկվում է քրեական պատասխանատվության: Պետք է նշել, որ քր. դատ. օր.-ը անձի վրա կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու պարտականություն դնում է նաև խափանման այլ միջոցների պարագայում (գրավը, հսկողության հանձնելը, հրամանատարական հսկողության հանձնելը), սակայն կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում տվյալ անձի անգործության համար քրեական պատասխանատվություն սահմանված չէ, ինչը, կարծում ենք, ճիշտ է:

Բացի այդ, կարծում ենք, որ երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չկատարելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը հակասում է հանրաճանաչ "non bis in idem" սկզբունքին: Նշված սկզբունքը, հռչակված լինելով մի շարք միջազգային իրավական ակտերով («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4 հոդվածի 1-ին մաս, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14 հոդվածի 7-րդ մաս), արգելում է նույն արարքի համար անձի նկատմամբ տուժանքային և (կամ) պատժողական սանկցիաների միաժամանակյա կիրառումը: Այդ սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 22 հոդվածում. «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատապարտվել նույն արարքի համար» և քր. դատ. օր.-ի 21 հոդվածի 1-ին մասում՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»: Պետք է նշել, որ "non bis in idem" սահմանադրական սկզբունքը մարդու իրավունքների և ազատությունների ընդհանուր իրավական երաշխիք է, և դրա ձևակերպումների տարբերությունները (դատապարտվել, դատվել, պատժվել, պատասխանատվության ենթարկվել) չի կարող նեղացնել դրա բովանդակությունը և գործողության ոլորտը: Գտնում ենք, որ անձնական երաշխավորողի կողմից իր ստանձնած պարտավորությունները չկատարելու համար նրա մուծած գումարը պետության եկամուտի վերածելն ու միաժամանակ վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելը պետք է համարել «non bis in idem» սկզբունքի խախտում: Կարծում ենք, որ անձնական երաշխավորողի կողմից իր ստանձնած պարտավորությունները չկատարելու համար նրա նկատմամբ դատավարական սանկցիայի կիրառումը լիովին համաչափ է նրա անգործության վտանգավորությանը: Ելնելով վերը ասվածից՝ առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել քր. օր.-ի 346 հոդվածը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ քրեաիրավական արգելքի նախատեսումը պետք է գիտականորեն հիմնավորված լինի, բավարարի արարքների քրեականացման չափանիշները և ոչ թե իրականացվի առանձին իրադարձությունների ազդեցության տակ՝ առանց հաշվի առնելու պատժողական քաղաքականությանը ներկայացվող ժամանակակից պահանջները: Միայն այդ դեպքում է հնարավոր ապահովել քրեական օրենսդրության արդյունավետությունը:

**МИСАК МАРКОСЯН – Реализация принципа экономии уголовной репрессии на законодательном уровне уголовной политики (Некоторые вопросы декриминализации).** – Статья посвящена вопросам декриминализации некоторых преступлений, предусмотренных Уголовным кодексом РА.

Экономия уголовной репрессии – важный и теоретически обоснованный принцип уголовной политики, который должен соблюдаться как на правотворческом, так и на правоприменительном её уровнях. Поскольку криминализация и декриминализация осуществляют функцию предварительного регулирования уровня преступности, то декриминализация является важным способом реализовать принцип экономии уголовной репрессии на законодательном уровне. Ссылаясь на уголовное законодательство некоторых стран и приводя ряд других аргументов, автор обосновывает необходимость декриминализации отдельных преступлений, предусмотренных Уголовным кодексом РА.

В частности, в статье предлагается декриминализовать такие деяния, как: оставление в опасности в тех случаях, когда лицо не было обязано заботиться о потерпевшем и не ставило его в опасное для жизни состояние; совершение сделки с лицом на крайне невыгодных для него условиях; грубое нарушение общественного порядка, если данные действия не были сопряжены с применением насилия или с угрозой его применения, а также с уничтожением или повреждением чужого имущества; прекращение самовольного захвата земельных участков или незаконного строительства, если в течение одного года в отношении лица было назначено двойное административное взыскание, а кроме того, некоторые деяния, признанные Уголовным кодексом РА преступлениями против правосудия.

В заключительной части статьи излагаются конкретные предложения по законодательным изменениям, которые позволят реализовать принцип экономии уголовной репрессии.

**MISAK MARKOSYAN – Implementation of the principle of economy of criminal repression at the legislative level of criminal policy (some issues of decriminalization)** – The present paper considers the problems of decriminalization of some crimes foreseen by the RA Criminal Code.

The author indicates that the economy of criminal repression is an important and theoretically justified principle of criminal policy, which should be observed both on the legislative and law enforcement levels of criminal policy. Proceeding from the fact that criminalization and decriminalization perform crime level preliminary regulation function, the author shows that decriminalization is an important tool for the realization of the principle of economy of criminal repression on the legislative level of criminal policy. Based on the presentation of criminal law studies in a number of for-

eign countries and other arguments, the paper argues the necessity of decriminalization of some crimes proposed by the Criminal Code of RA.

The decriminalization of the following crimes is proposed: the abandonment in danger, if the person was not obliged to take care of the aggrieved and it was not him who placed the aggrieved in a situation dangerous to life; making contract with a person on extremely unfavorable terms for him; brutal violation of public order, when the mentioned acts are not accompanied with violence, a threat to use it, or property damage; sustaining the unauthorized seizure of land or illegal construction when an administrative fine was imposed on the person during one year; other similar acts which are regarded as crimes against justice by the RA Criminal Code.

In its conclusive part, the paper suggests introducing several changes into the legislative system that will help apply the principle of the economy of criminal repression on the legislative level of criminal policy.